

**«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**«Հաստատում եմ»
Բուհի ռեկտոր**

**_____ Խաչատրյան Գ. Կ.
« 05 » _____ 05 _____ 2014թ.**

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

**«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ-ի ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ**

Ընդունված է գիտական խորհրդի նիստում

Արձանագրություն թիվ 3

“_30_” _____ 04 _____ 2014թ.

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Բուհ) Լեզուների ուսուցման կենտրոնը (այսուհետ՝ ԼՈՒԿ) Բուհի կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Իր գործունեության ընթացքում ԼՈՒԿ-ն առաջնորդվում է ՀՀ «Կրթության մասին» «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքներով, Բուհի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով:
3. ԼՈՒԿ-ը չի ենթադրում շահույթի հետապնդում և վարձավճարներն ուղղվում են ԼՈՒԿ-ի կազմակերպման ու զարգացման աշխատանքներին:
4. ԼՈՒԿ-ի ուսուցումն իրականացվում է բարձրագույն մասնագիտական կրթության չափորոշիչներով սահմանված հիմնական կրթական ծրագրերի շրջանակներից դուրս: Դասավանդումը ԼՈՒԿ-ում իրականացվում է վճարովի հիմունքներով, համաձայն Բուհի ռեկտորի և ունկնդրի միջև կնքված պայմանագրի: Դասընթացի տևողությունը պայմանավորված է ամբիոնի կողմից հաստատված ուսումնական ծրագրերի համար նախատեսված տևողությամբ: Անհրաժեշտության դեպքում ԼՈՒԿ-ում կարող են կազմակերպվել արագացված դասընթացներ:

II ԼՈՒԿ-ի ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. ԼՈՒԿ-ի հիմնական գործառույթներն են.
 - 1) խթանել կրթական և գիտական համակարգի զարգացումը,
 - 2) բավարարել անձի պահանջները սոցիալ-մշակութային բնագավառում, նպաստել գիտելիքների և փորձի ձեռքբերմանը,
 - 3) ամբիոնների աջակցությամբ մշակել նոր ծրագրեր և դասավանդման մեթոդներ,
 - 4) նպաստել «հարատև կրթության» (LLL) համակարգի կայացմանը և ընդլայնմանը,
 - 5) կազմակերպել լրացուցիչ կրթություն տարբեր տարիքային և սոցիալական խմբերի ներկայացուցիչների համար՝ զարգացնելով և ամրապնդելով սովորողների լեզվական գիտելիքները և հմտությունները:

III ԼՈՒԿ-ի գործունեության առարկան և նպատակները

6. ԼՈՒԿ-ի գործունեության առարկան է՝ եվրոպական և այլ լեզուների դասավանդումը՝ «Լեզուների իմացության իրազեկության համաեվրոպական համակարգ»-ի պահանջներն ապահովելու նպատակով:
7. ԼՈՒԿ-ի գործունեության նպատակներն են.
 - 1) նպաստել լեզուների ուսուցման բնագավառում կրթության որակի բարելավմանը,
 - 2) նպաստել անձի լեզվական գիտելիքների ձևավորմանը և ամրապնդմանը,
 - 3) նպաստել սովորողների կրթական մակարդակի բարձրացմանը՝ խոսակցական օտար լեզվի բնագավառում որակյալ գիտելիքների մատուցման միջոցով:

IV ԼՈՒԿ-ի աշխատանքների կազմակերպումը

8. ԼՈՒԿ-ի ուսուցումը կազմակերպվում է առկա հիմունքներով:
9. ԼՈՒԿ-ի ուսումնական ծրագիրը մշակվում է ԼՈՒԿ-ի մասնագետների կողմից, քննարկվում և հաստատվում է Բուհի համապատասխան ամբիոնների կողմից:
10. Դասընթացների անցկացման ժամանակացույցը և լսարանային ֆոնդի ապահովումը համաձայնեցվում է Բուհի ուսումնամեթոդական վարչության հետ և հաստատվում է Բուհի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:
11. ԼՈՒԿ-ի դասընթացները կազմակերպվում են խմբային սկզբունքով:
12. ԼՈՒԿ-ում սովորողների խմբերը ձևավորվում են՝ հաշվի առնելով նրանց համապատասխան լեզվի իմացության մակարդակը:
13. ԼՈՒԿ-ի դասընթացների մասին տրվում է հայտարարություն:
14. Ունկնդիրն ընդունվում է ԼՈՒԿ իր կողմից ներկայացված դիմումի համաձայն:
15. Ունկնդիրը կարող է ազատվել դասընթացից իր դիմումի համաձայն:
16. Ունկնդիրը հեռացվում է դասընթացից ուսման վարձը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում:
17. ԼՈՒԿ-ում դասընթացներն ավարտած անձանց տրվում է համապատասխան վկայական:

V ԼՈՒԿ կազմը և կառուցվածքը

18. ԼՈՒԿ-ի հաստիքային աշխատողներն են՝ ԼՈՒԿ-ի մասնագետը և ԼՈՒԿ-ի օպերատորը:
19. ԼՈՒԿ-ի դասավանդող անձնակազմը նշանակվում է Բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներից կամ հրավիրված մասնագետներից:
20. ԼՈՒԿ-ի մասնագետն անմիջականորեն ենթարկվում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:
21. ԼՈՒԿ-ի մասնագետը կազմակերպում, իրականացնում և վերահսկում է կենտրոնի աշխատանքները:
22. ԼՈՒԿ-ում դասավանդող մասնագետները վճարվում են առաջացած գումարների հաշվին՝ ժամավճարային կարգով:

VI Ֆինանսավորումը և հաշվարկները

22. ԼՈՒԿ-ում կազմակերպվող դասընթացների համար վարձավճարները սահմանվում են գիտական խորհրդի կամ ռեկտորի կողմից նշանակված ֆինանսատնտեսական հանձնաժողովի առաջարկությամբ:
23. Մինչև 23 տարեկան հաշմանդամության 1-ին և 2-րդ կարգ ունեցող և/կամ երկկողմանի ծնողազուրկ ունկնդիրների համար ուսուցումն անվճար է:
24. Արագացված դասընթացների վարձավճարների չափը որոշվում է ըստ ժամերի քանակի:

VII ԼՈՒԿ-ի աշխատողների և ունկնդիրների պատասխանատվությունը

25. ԼՈՒԿ-ի աշխատողները և ունկնդիրները պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով: